Երկուշաբթին շաբաթեայ որ օրն է, որ օրն է հինգշաբթին.
երեքշաբթին, ուրբաթ:

Վարժ. 2. Գտնել թասական անունները և հարց տալ—
քանի՞ կամ որերորդ (որ).

Մէկ ժամ: Առաջին ժամ: Երկու օր, երկրորդ օր:
Երրորդ տարի: Զորս ամիս: Հինգերորդ շաբաթ: Իննե-
րորդ խնդիր: Տասը աշակերտ:

Վարժ. 3. Վեց—վեցերորդ, տասնևմէկ—,
ութը—, քսանհինգ—,
քսան—, հարիւր—:

Վարժ. 4. Հետեալ օրինակների մէջ կէտերի տեղ դը-
րէք յարմարաւոր թասական անուններ:

Ես նստած եմ... նստարանի վրայ: Մեր դասաւա-
նում... աշակերտ կայ, եղբայրս... դասարանումն է:
Ամառը տարւայ... եղանակն է: Սուրէնը բոլորեց... տա-
րին: Արսէնը մտաւ... տարին: Յունւարը տարւայ...
ամիսն է: Յուլիսը տարւայ... ամիսն է: Տարին ունի...
ամիս: Ամիսը... օր:

Բ Ա Յ (առարկայի գործողութիւնը).

§ 13. Կսն քստեր, որոնք ցոյց են տալիս առարկայի
գործողութիւնը (օր. գրում է, վագեց, ծեծում է), կամ
դրութիւնը օր. (ծեծած, մաշած), այդ քստերը կոչում
են քսյ:

Առարկայի գործողութեան համար կարելի է հարց
տալ. ինչ է անում առարկան. ինչ է կատարում ա-
ռարկայի հետ:

Վարժ. 1. Գրեցէք, ինչ է կատարում առարկան:

Աշակերտը... Ծառան... Երկրագործը... Գարբինը...
Խոհարարը... Գրավաճառը... Դերձակը... Զունը... Կա-
տուն... Հաւը... Սոխակը... Ծիծեռնակը... Զուկը... Օձը...

Վարժ. 2. Գրեցէք ինչ է կատարում առարկայի հետ
Զինը դարնանը... Աշնանը ծագիկները... Ամառը
պտուղները... Գարնանը դաշտերը... Գարնանը գետի
սառցը... Ինչ եղաւ պատը... Ինչ եղաւ մարդը...
Ինչ եղաւ ապակին... Ինչ եղաւ օրը...

Վարժ. 3. Արտագրել 18-երորդ երեսից «Որբիկ» ոտանա-
ւորը և գիծ քաշել, բայերի (գործողութիւն ցոյց տուող բառերի)
տակ, տալով յարմարաւոր հարցեր թէ առարկային և թէ բային:

Վարժ. 4. Ո՞վ (կամ ինչը) ի՞նչպէս է շարժուում:

Մարդը (Մարդը ման է դալիս, վազուում է) Ձին...
Կապիկը... Ծիծեռնակը... Բազը... Գորտը... Պէճը... Նա-
պաստակը... Առուն. Արեւը առաւօտեան. Արեւը երե-
կոյեան:

Վարժ. 5. Ո՞վ (կամ ինչը) ի՞նչ է ձայնում:

Մարդը (Մարդը խօսում է, երգում է, լալիս է):
Գովը... Ձին... Էջը... Զուկը... Կատուն... Աքաղաղը...
Ոչխարը... Այծը... Ծիւղը... Մեղուն... Բզէզը... Սո-
խակը... Քամին... Առուն... Զանգը...

§ 14. Դործողութիւնը կարող է կատարել խօսող
անձը (ես—մենք), խօսակիցը (դու—դուք), եւ մի ուրիշը, որ
ըստակայ է (նա—նրանք):

Վարժ. 6. Յոյց տալ ով է կատարում գործողութիւնը
(Ես, դու, թէ նա):

Ես իմ դասը գրեցի: Դու դեռ խաղում ես: Ուր
գնաց Արամը. նա ինձ հետ պէտք է խաղար: Աղջիկը
կար է անում: Ես պարտէզ գնացի: Դու լաւ ես գրում:

Այսօր մենք շատ ուրախ ենք: Նրանք նստած են
այգում: Դուք լաւ ընկերներ էք:

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն.

§ 15. Որպէսզի խօսքի մէջ մէկ անգամ՝ գլխի մէջ
տաճ անունները չը կրկնուին, գործ են տալով որոշ բա-
ռեր. այդ բառերը կոչում են դերանուն:

Դերանունները լինում են.

Անձնական. Ես, դու, նա, մենք, դուք, նրանք:

Յուցական. Եա, դա, նա, այս, այդ, այն:

Ստացական. Իմ, քո, իւր, մեր, ձեր:

Փոխադարձ. Միմիանց, իրար, մէկմէկու:

Ենթակարգական. Որ, ով, ինչ, ուր, երբ:

Հարցական. Ո՞ր, ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, երբ:

Որոշակալ. Ամենքը, բոլորը, իւրաքանչիւրը:

Անորոշ. Ոմն, ոչ ոք, ոչինչ, միւս, մի քանի:

Վարժ. Արտագրել և գերանունների տակ գիծ քաշել:

Ես կարգում եմ: Ով ում սիրում է. նրան էլ կը լսէ:
Ոչ ոք իրան չար չի կամենայ: Ասա դու ինձ, ոտոք վարդի,
ո՞ւր ես ծլել. ո՞ւր ես ծաղկել. ո՞ր հովիտի, կամ ո՞ր դաշտի,
զարգարանք ես դու եղել: Ամենքը սիրում են իրանց
Հայրենիքը: Մարդիկ պէտք է միմիանց օգնեն: Ով որ
չունի կարգ ու կանոն. նա ասում է անկիրթ մարդ:
Իմ մատիտը կորաւ, քոնը տուր, որ գրեմ: Ոմանք կայ-
ծակից վախենում են: Սիրիքո ընկերին, ինչպէս ինքդ
քեզ: Ուր որ գնաս, ինչ որ լինես, յիշիր, որ դու ծնող-
ներ ունիս: Տղաները միմիանց հետ կուռում էին: Մեր
տունը նոր է շինած: Ո՞վ է նա, ի՞նչ է նրա անունը:
Ինչ որ ցանես, այն կը հնձես: Դու ո՞վ ես, ես քեզ չեմ
ճանաչում:

Մ Ա Կ Բ Ա Յ (գործողութեան պարագան)

§ 17. Բառեր կան. որոնք ցոյց են տալիս, թէ ի՞նչ-
պէս է կատարում գործողութիւնը (օր. ես անսխալ եմ
գրում). ե՞րբ եւ ո՞րտեղ է կատարում գործողութիւնը.
(օր. երեկոյեան ես այգի գնացի), կամ ցոյց են տալիս
գործողութեան պարագան (ճանաչմանը):

Դործողութեան պարագան ցոյց տուող բառերը կոչ-
ւում են մականոյ:

Մականոյ պատասխանում է. ի՞նչպէս, երբ, ո՞րտեղ,
հարցերին:

Վարժ. Արտագրել և մականոյների տակ գիծ քաշել:

Երեկոյեան ես եկեղեցի գնացի: Հեղինէն լաւ է գը-
րում: Դպրոցում այսօր հանդէս կար: Արեգակը դուրս
է եկել պսպղալով: Դնացքը սրընթաց անցաւ մեր առա-
ջից: Լաւ ձին արագ է վազում: Վաղը Արամը գիւղ է

գնալու: Մայիսին բացուում է վարդը, սոխակը երգում՝
անուշակ: Յունեարին ձիւնը ծածկում է սար ու ձոր:
Նստիր տանը և լաւ սովորիր: Երեկ անձրեւ եկաւ: Աշ-
նանը թռչունները գնում են տաք երկիրներ: Ծոյլերը
ուշ են վեր կենում: Ես այսօր վաղ դպրոց գնացի: Աշա-
կերտները կարգով գնացին դասաբան:

Ձ Ա Ղ Կ Ա Պ.

§ 18. Շաղկապ ասում են այն քառերը, որոնք
կապում են միմիանց հետ քառեր կամ խօսքեր. (օր
ձունն ու կատուն: Բազէն և Աղաւնին: Ես տւի. բայց
նա չառաւ):

Շաղկապներն են. և, ու, այլ, իսկ, էլ, եթէ, թէպէտ,
սակայն, կամ, բայց, երբ, նոյնպէս, թող, որովհետեւ
այդ պատճառով:

Վարժ. Լուսինը լուսաւորում է, բաց չի տարացնում:
Արամը, որ վատ էր սովորում, դասաւանդ մնաց: Մեր
տունը, որ շատ հին էր, փուլ եկաւ: Կովը կենդանի է, իսկ
ոսկին՝ մետաղ: Ես դուրս կը գնայի, եթէ անձրեւ չը գար:
Ես սիրում եմ ընկերոջս, թէն նա չար է. Ես գնացի
դպրոց, երբ դասն սկսւած էր: Ես բեզ հետ չեմ խա-
ղում, որովհետեւ դու անկարգ ես: Կովը, ձին և շունը
վիճում էին: Հեղինէն ջանասէր է, այդ պատճառով ա-
մենքը նրան սիրում են: Ես գնացի, իսկ դու եկար:
Գարունը գեղեցիկ է, բայց անբերրի: Ես բեզ լաւութիւն
արի, սակայն այդ դու չիմացար:

ՆԱԽԱԳԻՐ ԵՒ ՅԵՏԱԴԻՐ.

§ 19. Այն քառերը, որոնք ցոյց են տալիս ստա-
րակների փոխադարձ յարաբերութիւնը կոչւում են նախա-
գիր, երբ գործ են ածում անուններից առաջ, եւ յետա-
գիր, երբ գործ են ածում անուններից յետոյ:

Նախադիրներն են. Առանց, դէպի, մինչեւ, բացի:
Յետադիրներն են. Վրայ, մօտ, հետ, յետոյ, համար,
մասին. ներքեւ, վերեւ, առաջ:

Զ Ա Յ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն.

§ 19. Չայնարկութիւն կոչւում են այն քառերը, որոնք
ստորապայտում են մարդու զմեռագան զգացումները. ու-
րախութիւնը—ան, էյ. զարմանքը—վահ, վայ. վախը—ծյ,
վճյ. տխրութիւնը—անխ, ափսոս, աւանդ. ծիծաղը—հահ,
հահ. սպառնալիքը—հապահ. զգաւորը—թոհ, նաեւ տօ,
ծօ, քահ, հօ, հօ, քըշ, քշա, ճիկ, ճիկ, փըշա:

Յ-Ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ*)

§ 20. 1. Յուզան մատնեց Յիսուսին: Մեր սենեակի յա-
տակը ներկած է: Յիսուս չէր սիրում յամառ և յանդուգն երե-
խաներին: Մեր պարտիզում յասմիկի թփեր կան: Ես յաճախ
լինում եմ Յովհաննէսի մօտ: Յուսիկը յանցաւոր էր: Յախճա-
պակուց անօթներ են շինում: Ես Յակովբի մօտ յակինթ տեսայ:
Մենք յաջողութեամբ անցանք յաջորդ դասարանը:

2. Ես շատ եմ յարգում իմ ուսուցչին: Մենք ապրում ենք
վերին յարկում: Յովսէփը յարմար բոլէին յարձակեց Յով-
հաննէսի վրայ և խից նրա ձեռքի յասմիկը: Յարութիւնը յի-
մար տղայ չէ: Գայլը մի ոչխար յափշտակեց: Յովսէփը իբրեւ
յիշատակ տւեց ինձ իւր պատկերը: Ես գիտեմ մինչեւ յիսունը
համարել: Հիւսնը յղկում էր տախտակը:

3. Մօտակայ ժայռից յստակ աղբիւր է բղխում: Յունեա-
րին շատ ցուրտ է լինում: Յունիսը մեզ խոտ է տալիս, իսկ յու-
լիսը՝ առատ ցորեն: Յովազը յօշոտեց յիմար ոչխարին: Նա յօ-
ժար կամքով թողեց իր պաշտօնը: Յուսիկը գեղեցիկ յօնքեր
ուներ: Ես մի փոքրիկ յօգւած գրեցի: Յարէթը յոյս ունի, որ
յունեարին դպրոց կը մտնի: Ես յոգնեցի երկար զբօսնելուց:
Յոյները խելացի ազգ են:

*) Այս վարժութիւնները փոխանակ 18-րդ երեսում շարեւում, այս երե-
սին մնացին:

Ս Տ Ո Ր Ո Գ Ե Ա Լ.

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ.

Բ Ը Ռ Ե Ր Ի Կ Ա Պ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը.

Ն Ա Ն Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն.

§ 1. Խօսքը կազմւած է նախադասութիւններից:

Մի միտք արտայայտած բառերով, կոչւում է նախադասութիւն: (օր. Հաւը խօսեցաւ, օրը բացւեցաւ: Մի խօսք է, երկու նախադասութիւն):

Ն Ա Ն Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ի Ն Ը.

§ 2. Բառերը, որոնցից կազմւած է նախադասութիւնը, կոչւում են նախադասութեան անդամներ: Նախադասութեան գլխատը անդամներն են. ենթակայ, ստորոգեալ, իսկ երկրորդական անդամներն են. պարզող կամ լրացնող—լրացուցիչ, որոշիչ և պարագայական բառերը:

Ե Ն Թ Ա Կ Ա Յ.

§ 3. Գլխատը առարկան, որի մասին խօսւում է նախադասութեան մէջ, կոչւում է ենթակայ: Ենթական պատասխանում է. ո՞վ, (շնչաւորները). ի՞նչ (անշունչները) հարցերին:

Վարժ. Նախադասութեան մէջ գտնել ենթական և հարց տալ ո՞վ կամ ի՞նչ:

Աշակերտը կարդում է: Ճրագը վառւում է: Երեք լուսաւորում է: Մուկը խաղում է: Երկինքը պարզ է: Զաւէնը քնած է: Դաշտը ծածկւած է ծաղիկներով: Երկաթը մետաղ է: Եղբայրս մի շնիկ ունէր: Եյգին պրաղաւէտ է:

§ 4. Այն, ինչ որ ասում կամ խօսւում է ենթակայի մասին, կոչւում է ստորոգեալ: Ստորոգեալը պատասխանում է. ի՞նչ է անում առարկան (օր. Օձը սողում է): Ի՞նչ է կատարւում նրա հետ (Օձը սառեց): Ի՞նչպէս է առարկան: (Օձը թունաւոր է): Ի՞նչ է նա (Օձը սողուն է):

Վարժ. Արտագրել և ստորոգեալի տակը գիծ քաշել:

Դիւղացին ցանում է: Գետը հոսում է: Մրջիւնը մօտեցաւ առւակին: Զաքարը քաղցր է: Հովիւը սրինգ է նւագում: Քալենին ծառ է: Քացախը թթու է: Ձկնորսը ձուկ է որսում: Պատը բանդւեց: Օրը ցուրտ է: Վարդը հոտաւէտ ծաղիկ է: Սեղանը կարասի է: Գովը ընտանի կենդանի է: Գիշերը մութն է: Չմեռւայ օրը կարճ է: Չուկը լողում է: Չիւնը հալւեց արեւից: Սարերը ծածկւեցան կանաչով:

Վարժ. 1. Ենթակային աւելացնել ստորոգեալ:

Դիրքը... (ինչպէս է). Սեղանը... (ինչ է). Ուսուցիչը... (ինչ է անում). Տունը... (ինչ եղաւ). Վարդը... Խնձորը... Քամին... Որսորդը... Չուկը... Պատուհանը... Չին... Չիւնը... Ձկնորսը... Ուռենին... Դիւղացին... Դարբինը... Կաղնին... Մեղրը... Ծովը... Զուրը... Դնդակը... Աշնանը ծաղիկները... Պղպեղը... Եղէսը... Մայիսը... Ուրբաթը... Քահանան... Դարունը...

Վարժ. 2. Իւրաքանչիւր ստորոգեալին աւելացնել ենթակայ:

... գրում է, ... հաշում է, ... բզգում է, ... բարի է, ... ծաղիկ է, ... մեռաւ, ... գրում է, ... երգում է, ... համեղ է, ... դառն է, ... միջատ է, ... հիւանդացաւ, ... սովորեցնում է, ... որսում է, ... թռչուն է, ... սողուն է, ... մեծ է, ... լայն է, ... փչում է, ... հաստ է, ... հին է, ... շինութիւն է:

ՊԱՐԶՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Լ Բ Ը Յ Ո Ւ Յ Ի 2.

§ 5, Այն պարզող ըստերը, որոնք պատասխանում են. ումը—ինչին, ում—ինչ, ումնով—ինչով ումնից—ինչից, հարցերին, կոչումն են լրացուցիչ:

Վարժ. 1. Գիծ քաշել լրացուցիչ բառերի տակ, տալով յարմար հարցեր:

Հովիւը արածացնում է հօտը. Մայրը սիրում է երեխային: Զինուորը ծառայում է Հայրենիքին: Զինորսը ցանցով ձուկ է բռնում: Ես գիրք եմ կարդում: Մէկ ծաղկով դարուն չի գալ: Ես իմ եղբորից նամակ ստացայ եւ տւի մայրիկին: Երկինքը ծածկւել է ամպերով: Գիւղացին գերանդիով խօտ է հնձում: Գարբինը մուրձով երկաթ է ծեծում: Ես տեսայ Սուրէնին, որ նամակ էր գրում: Ոսկուց մատանի են շինում: Ուսուցիչը աշակերտին մի գիրք ընծայեց:

Վարժ. 2. Աւելացնել լրացուցիչներ:

Մենք աղօթում ենք (ում): Կօշկակարը (ինչ է) կարում: Կովը (ինչ) է տալիս: Գարունը գեղեցիկ է (ինչով): Ես յարգում եմ (ում): Ես նամակ գրեցի (ում): Գաշտը ծածկւեց (ինչով): Երեխաները (ինչ) կերան: Աշտկերտը գրում է (ինչը, ինչո՞վ): Մայրս ստացաւ (ինչ, ումնից): Ոչխարը (ինչ) է տալիս: Թռչունը ազատեց (ինչից): Արծիւը (ինչ) հիւսեց: Հայրս ընծայեց (ինչ, ում): Գիւղացին վարում է (ինչը, ինչով): (Ի՞նչից) խօփ են շինում: (Ի՞նչից) ամաններ են շինում: Ես (ինչով) տուն եկայ:

Ո Ր Ո Ղ Ի 2.

§ 6. Այն պարզող ըստերը, որոնք պատասխանում են. ինչպիսի, ում, ո՞ր, ո՞րքան հարցերին—կոչումն են ուղղորդիչ:

Վարժ. 1. Գիծ քաշել որոշիչների տակ, տալով յարմար հարցեր:

Փայլուն արեւ ելաւ: Սիրուն ծաղիկները թօշնեկ են: Երկու ազաւնի նստած էին ծառի վրայ: Մենք սիրում ենք բարի եւ խելօք մանուկներին: Գիշերւայ մութը աշխարհս պատեց: Մեր տունը երկրորդ փողոցի վրայ է: Կացնի բերանը սուր է: Առաջին օրը ձին եկաւ: Պայծառ լուսինը մտաւ մութ ամպի տակ: Երեք մարդ գնացին գիւղ: Մարտը դարնան առաջին ամիսն է: Հսկայ արծիւը նստել էր բարձր ծառի վրայ:

Վարժ. 2. Աւելացնել որոշիչներ:

(Ի՞նչպիսի) ձմեռը կանցնի: Ծառից կախած են (ինչպիսի) պտուղներ: Տարին (քանի) ամիս ունի: (Ու՞մ) պարտէզը գեղեցիկ է: Յունւորը տարւայ (ո՞ր) ամիսն է: (Ո՞ւմ) գիրքը կտրաւ: (Ո՞րպիսի) աշակերտը արժանի է դովետի: (Ի՞նչպիսի) թռչունները վերադառնում են: Փութը ունի (քանի գրւանքայ): Մեր դասարանում (քանի) աշակերտ կայ: (Ի՞նչպիսի) աղւէտը մի հաւ փախցրեց: (Ի՞նչպիսի) շունը պահպանում է (ինչի) հօտը:

Պ Ա Ր Ը Յ Ա Յ Ա Ն Բ Ա Ռ Ե Ր.

§ 7. Այն ըստերը, որոնք պատասխանում են. ո՞րտեղ—ո՞րտեղից, երբ, ինչպէս, ինչի համար, ինչից, կոչումն են պարագայական ըստեր:

Պարագայական ըստերը ցոյց են տալիս տեղը, ժամանակը, գործողութեան կերպը, նպատակը եւ պատճառը:

Վարժ. 1. Պարագայական բառերի տակ գիծ քաշել, յարմարաւոր հարցեր տալով:

Մենք այսօր այգի գնացինք խաղող քաղելու: Երեկ մեր զպրոցում հանդէս կար: Գիւղացիները առաւօտեան անտառ գնացին փայտ կտրելու: Նա լաւ է գրում: Ու-

ըախ փայլում է արեգակը: Սոխակը քաղցր է երգում վաղ արշալոյսին, վարդի թփենու վրայ: Երևանում շատ այգիներ կան: Մանուկները գնում են դպրոց սովորելու: Մենք ամառը գիւղ գնացինք: Գարնանը անտառում թռչունները ուրախ երգում են: Գառը շոգին գնաց դէպի առւակ ջուր խմելու: Այս տարի բերքը առատ էր:

Վարժ. 2. Աւելացնել պարագայական բառեր:

... գետինը ծածկւում է կանաչով: | Չուկը լողում է... | Գայլը գառը տարաւ... | Պառաւ տատը դուրս չի գալիս... | Պտուղները հասնում են... | ... ծառերի տերեւները դեղնում են: | Արսէնը ... դուրս եկաւ պարտէզ: | Ոչխէնը ... է երգում: | Աշակերտները գնում են ... | Նա ... է գնում: | Վարդը բացւում է ...:

ԴԻՄՈՂ ԿԱՄ ԿՈՉԱԿԱՆ ԲԱՌԵՐ.

§ 8. Նախադասութեան մէջ այն առարկան, որին որ դիմում ենք, կոչում է կոչական բառ:

Կոչական բառերը նախադասութեան մէջ բաժանւում են միւս անդամներից ստորոկէտներով. իսկ նախադասութեան սկզբին և վերջին ընդունում են նաև դարձացական (') նշան:

Վարժ. Աստուծո՛ւ, օրհնիր մեր աշխատանքը: Մնաս բարով, իմ Հայրենիք: Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցիր: Դէ՛հ, քաշեցէք, սիրուն եղներ, առաջ տարէք արօրը: Ասա՛ դու ինձ, ոստղ վարդի, ո՛ւր ես ծլել, ո՛ւր ես ծաղկել: Ընկերներ, լինինք ջանասէր: Տէ՛ր, դու պահիր մեզ: Ծի՛ծեռնակ, ծիծեռնակ, ո՛ւր ես թռչում այդպէս արագ: Կռճճնկ, ուստի (որտեղից) կ'ուզաս: Չայն տուր, ո՞վ ծովակ, ինչո՞ւ լռում ես:

Վարժ. Հետեալ նախադասութիւնների մէջ ցոյց տալ ենթական, ստորոգեալը, որոշիչ, լրացուցիչ և պարագայական բառերը:

1. Փոքրիկ Գուրգէնը կէսօրին խաղում էր պարտի-

դում: Պառաւ նոնը թիւ է մանում բրդից: Ես մի գիրք տւի եղբօրս: Այսօր գրքում ցուրտ քամի է փչում: Մենք գնացինք շուկայ իրեղէններ գնելու:

2. Դեղնած դաշտերին իջել է աշուն,
Անտառը կրկին ներկել է նաշխուն.
Պաղ-պաղ մէզի հետ փչում է քամին,
Քշում է տանում տերեր զեղին:
Տխուր հանդերից մարդ և անասուն
Քաշւում են կամաց ամենքն իրանց տուն:

«Լուսաբեր»:

	Որոշիչ	Որոշիչ	Լրացուցիչ	Պարագ.
	Որոշիչ	Որոշիչ	Լրացուցիչ	Պարագ.
	Որոշիչ	Որոշիչ	Լրացուցիչ	Պարագ.

Հ Ո Ւ Ո Վ Ո Ւ Մ.

§ 9. Անունները նայած թէ նախադասութեան մէջ ինչ հարցի են պատասխանում, փոփոխում են իրանց վերջատրութիւնները. օր. Փողոցը (ինչը) լայն է: Փողոցի (ինչի) մայրերը մաքուր են: Փողոցով (ինչով) մարդիկ են անցնում: Փողոցից (ինչից) ձայներ են լսում: Փողոցում (ինչո՞ւմ) խաղում են:

Անունների վերջատրութիւնների փոփոխումը կոչում է հոլովում: Ամեն մի փոփոխած ծնէ հոլով:

Հոլովները եօթն են. Ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներդոյական:

Ո Ւ Ղ Ղ Ա Կ Ա Ն Հ Ո Ւ Ո Վ.

§ 10. Ուղղական հոլովը նախադասութեան մէջ ենթակայ է եւ էական ըայի հետ (ևմ, ես, է) ստորոգեալ: Ուղղական հոլովը պատասխանում է ո՞վ, ինչ, հարցել ինչ.

Վարժ. Ծիծեռնակը*) երգում է: Աղանին ընտանի թռչուն է: Մի մարդ եկաւ մեր տուն: Լուսինը փայլում է: Ձին վազում է: Կովը կենդանի է: Գետը հոսում է: Աքաղաղը կանչում է: Ոսկին մետաղ է: Մի երեխայ ընկաւ կառքի տակ:

Ս Ե Ռ Ա Կ Ա Ն Հ Ո Լ Ո Վ .

§ 11. Սեռական հոլովը ցոյց է տալիս, թէ մի առարկայ ում է պատկանում. (օր. Մարի կատար. ձիու բաշ. մօր անուն. գարնան օր. ձկան իւղ. քրոջ մատանի): Սեռական հոլովը պատասխանում է ում, ինչի, հարցերին:

Վարժ. Արտագրել և սեռական հոլովների տակ գիծ քաշել:

Աշակերտի գիրքը կորաւ: Եկեղեցու գանդերը զոգանջում են. Աշնանը ծառերի տերեւները թափւում են. Իմ քրոջ անունը Աշխէն է: Մօրս ոտը ցաւում էր: Ձկան իւղը օկտակար է: Մեր հարեանի որդու անունը Բարգէն է: Զաւէնի գլխի մազերը երկար են: Թագաւորի պալատը գեղեցիկ է: Այսօր օրւայ մեծ մասը ամպամած էր: Ուղտի վիզը երկար է: Դարկուտը փշաքրեց գիւղացիների արտերը: Դաշտերի վրայով անցնում էին թռչունների խմբերը: Յուլիսը տարւայ ամիսների մէջ ամենաշոգն է: Մեր շան գլխի վրայ նշան կայ: Մկան պոչը երկար է: Ծառան իր տիրոջ համար հաւի ձագեր գնեց: Զարթուլայ մէջ վեց օր ենք սովորում: Մի ժամւայ ընթացքում տասն երես կարդացի:

Տ Ր Ա Կ Ա Ն Հ Ո Լ Ո Վ .

§ 12. Տրական հոլովը ցոյց է տալիս թէ մի առարկայ ո՞ւմ են տալիս, ի՞նչուն են մօտեցնում կամ ու-

*) Երբ նախադասութեան մէջ ենթական (ուղղ. հ.) յայտնի է (ծանօթ), այն ժամանակ ուղղականի վրայ աւելացւում է ը կամ ն որոշող մասնիկները:

ղարկում մի քան. (օր. Մայրը հաց տւեց աղքատին): Տրական հոլովը պատասխանում է. ումը, ինչին, որտեղ, երբ հարցերին:

Վարժ. Արտագրել և տրական հոլովների տակ գիծ քաշել:

Մենք արժանացանք ուրախ մայիսին: Հայրը մի գիրք ընծայեց Գուրգէնին: Իմ մատիտը տւի նրան. Ծերունին ասաց պառաւին, որ տանը մնայ: Տուր ինձ քո մատիտը: Դու մի հաւատա ուրիշներին: Մի ցանկանա քո ընկերին այն, ինչ որ քեզ չես ցանկանում: Ինքը քեզ օգնող եղիր: Արեն յաղթեց ամպերին, շողքը գցեց սարերին: Ամպը եկաւ նստեց սարին, նստեց սարի սուր կատարին: Դեղնած դաշտերին իջել է աշուն:

Հ Ա Յ Յ Ա Կ Ա Ն Հ Ո Լ Ո Վ .

§ 13. Հայցական հոլովը պատասխանում է. ում, ինչ, ուր հարցերին. (օր. ես նամակ (ինչ) գրեցի: ես մի տղայ (ում) տեսայ: նա եկեղեցի (ուր) գնաց):

Վարժ. Արտագրել և հայցական հոլովների տակ գիծ քաշել:

Աշակերտը գրում է դասը: Մայրը սիրում է իր երեխային: Ես մի քահանայ տեսայ: Ես տեսայ նրա հօրը: Ձկնորսը ձուկ է ծախում: Կատուն մուկ բռնեց: Հովիւր արածացնում է ոչխարների հօտը: Մայրը եկեղեցի գնաց: Ես մի մատանի գնեցի: Կովը ջուր է խմում: Մուկը հաց է ուտում: Որսորդը որսում է սագեր ու բաղեր: Դիւղացիք վարում են արտերը և ցորենը՝ ցանում: Ոչխարը կաթ է տալիս: Մրգավաճառը խաղող, տանձ ու խնձոր է ծախում:

Բ Ա Յ Յ Ռ Ա Կ Ա Ն Հ Ո Լ Ո Վ .

§ 14. Բացառականը ցոյց է տալիս թէ մի քան ո՞ւմ նից, կամ ո՞րտեղից է ըստանում—հեռանում:

Բացառական հոլովը պատասխանում է. **հմնից, ինչից և որտեղից հարցերին:**

Վարժ. Արտագրել և բացառական հոլովների տակ գիծ քաշել:

Մայրը նամակ ստացաւ իւր սրբուհ: Երկաթից գործիքներ են շինում: Փողոցից բարձր ձայներ էին լսում: Ոսկուց զարդեր են շինում: Եղբայրը քրոջից մեծ է: Այս օրւանից սկսեց մեր դասերը: Երկնքից անձրև է թափւում: Կաւից ամաններ են շինում: Ես իմ հղբօրից փօքր եմ: Ձկից վատ հոտ է գալիս: Նա իր տիրոջից անբաւական է: Իմ քոյրը ինձանից խելօք է: Չուկը գլխից կը հոտի: Լաւ ծառից լաւ պտուղ կը ստացւի: Ծաղիկները թօշնել են տօթից:

Գ Ո Ր Ծ Ի Ա Կ Ա Ն Հ Ո Լ Ո Վ.

§ 15. Գործիականը ցոյց է տալիս թէ-գործողովմինը ո՞ւմնով, ի՞նչով է կատարում: Գործիականը պատասխանում է. **հմնով, ինչով, որտեղով: հարցերին:**

Վարժ. Արտագրել և գործիական հոլովների տակ գիծ քաշել:

Մէկ ծաղկով գարուն չի գալ: Դարբինը մուրճով երկաթ է ծեծում: Նա գոհ սրտով հեռացաւ: Մայր Արաքսի ափերով քայլամուր գնում եմ: Երկնքով ամպեր են վազում: Գիւղացին մանգաղով հնձում է: Մշակը կացնով փայտ է չարդում: Հօրով, մօրով մնաս: Աշխէն, այս դռնով արի: Աշակերտները մատիտով նկարում են: Մենք աչքերով տեսնում ենք, իսկ ականջներով լսում:

Ն Ե Ր Գ Ո Յ Ա Կ Ա Ն Հ Ո Լ Ո Վ.

§ 16. Ներգոյականը ցոյց է տալիս տեղը, պատասխանում է ո՞րտեղ հարցին:

Վարժ. Արտագրել և ներգոյական հոլովների տակ գիծ քաշել:

Մեր պարտիզում վարդի թփեր կան: Եկեղեցում շատ աղօթողներ կային: Մեր տանը հիւրեր կան: Դպրոցում աշակերտները խաղում էին: Դասարանում նրանք լուռ գրում էին:

Հ Ո Լ Ո Վ Մ Ա Ն Օ Ր Ի Ն Ա Կ Ն Ե Ր.

	Ե	զ	ա	կ	ի	Յոգնակի	
	ի հոլով.	ու հ.	ան հոլ.	ւայ հոլ.	ոջ հոլով.	օր հոլ.	
Ուղղ.	քար	ձի	նուռ	օր	տէր	հայր	քարեր ^{*)}
Սեռ.	քարի	ձիու	նռան	օրւայ	տիրոջ	հօր	քարերի
Տր.	քարին	ձիուն	նռան	օրւան	տիրոջը	հօրը	քարերին
Հայց.	քար	ձիուն	նուռ	օր	տիրոջը	հօրը	քարեր
Բաց.	քարից	ձիուց	նռնից	օրւանից	տիրոջից	հօրից	քարերից
Գործ.	քարով	ձիով	նռնով	օրով	տիրոջով	հօրով	քարերով
Ներգ.	քարում	ձիում	նռնում	օրում	տիրոջում	հօրում	քարերում

*) Այսպէս կազմւում են միւս հոլովների յոգնակին:

ի. հոլ. այսպէս են հոլովւում անունների մեծագոյն մասը.

ու. Այսպէս են հոլովւում այն անունները, որոնք ուղղ-նում ի ունին. (օր. գօտի, ոսկի... նաև Աստուած, տէր—սիրու)

ան. Այսպէս հոլովւում են. բուռ, գուռ, կուռ, ձուկ, մուկ, լիռ... նաև ում, ուն, ութին, վերջացող բառերը. (օր. բարու-թին, արիւն, շուն, տուն, ուսում, զգացում):

ւայ. Այսպէս հոլովւում են Ժամանակի անունները. (օր. տարի, ամիս, շաբաթ):

ոջ. Այսպէս հոլովւում են. ասնուտէր հողատէր, կին, քոյր, հօրաքոյր, ընկեր:

օր. Այսպէս հոլովւում են. կնքահայր, վանահայր, տիրա-մայր, եղբայր, հօրեղբայր:

Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ն Ն Ե Ր Ի Հ Ո Լ Ո Վ Ո Ի Մ.

	եզ. թ. յագ. թ.	եզ. թ. յոգ. թ	եզակի, յոգնակի	եզակի, յոգնակի
Ու.	եւ-մենք	զու-զուք	նա-նրանք	ինքը-իրանք
Ս.	իմ-մեր	քո-ձեր	նրա-նրանց	իւր-իրանց
Տ.	ինձ-մեզ	քեզ-ձեզ	նրան-նրանց	իրան-իրանց
Հ.	ինձ-մեզ	քեզ-ձեզ	նրան-նրանց	իրան-իրանց
Բ.	ինձնից-մեզնից	քեզնից-ձեզնից	նրանից-նրանցից	իրանից-իրանցից
Դ.	ինձնով-մեզնով	քեզնով-ձեզնով	նրանով-նրանցով	իրանով-իրանցով
Ն.	ինձնում-մեզնում	քեզնում-ձեզնում	նրանում-նրանցում	իրանում-իրանցում

Նա գերանւան պէս հոլովւում են. սա, գա գերանունները:

Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ.

§ 17. Բայերը (տես 29 եր.) փոփոխում են իրանց վերջատրուծիւնները ժամանակներով, թւերով եւ դէմքերով: Բայերի վերջատրուծիւնների այդպիսի փոփոխումը կոչւում է խոնհարհում:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ն Ե Ր Ը.

§ 18. Բայերը ունին երեք ժամանակ. ներկայ, աւ-
ցնայ (անկատար եւ կատարեալ) եւ ապառնի:

Ներկայ ժամանակը ցոյց է տալիս, որ գործողութիւն, կատարւում է այժմ. (օր. կարգում եմ, երգում է, գնում եմ):

Անցնալ անկատարը ցոյց է տալիս, որ գործողութիւնը սկսած է բայց չէ վերջացած (օր. գրում էի):

Անցնալ կատարեալը ցոյց է տալիս, որ գործողութիւնը սկսել է եւ վերջացել (օր. կարգացի, երգեցի, գնացի):

Ապառնի ժամանակը ցոյց է տալիս, որ գործողութիւնը պէտք է կատարւի. (օր. կը կարգամ կամ պիտի կարգամ, պիտի երգեմ, պիտի գնամ):

Վարժ. Նախ արտագրել բայերը ներկայ ժամանակով, ապա անցնալով եւ ապառնիով:

Գնում եմ: Երգում էի: Խաղում ես: Կը նայեմ: Կը կարգամ: Ծաղկում էր: Նստեց: Կանգնեմ: Խաղում են: Կը գրեմ: Աղօթեցին: Թռան: Այրւում է: Կը նստեմ: Կը պառկեմ: Երգեց: Խօսեցին: Կանես: Կուտես: Կուտէ:

Թ Ի Ի Ե Ի Դ Է Մ Ք.

§ 19. Բայը ունի երկու թիւ (եզ. եւ յոգ.) եւ երեք դէմք. առաջին, երկրորդ, երրորդ: Եզակի. 1 ես, 2 դու, 3 նա. յոգնակի. մենք, դուք, նրանք:

Վարժ. Ցոյց տալ բայի ժամանակը, թիւն եւ դէմքը:

Ես փողոց ելայ: Դու տուն ես գնում: Մենք լաւ ենք սովորում: Դուք լաւ էք նկարում: Նրանք պարտէզ

գնացին: Դու դուրս եկար տանից: Ծիծեռնակները թը-
ռան: Ես զարոց կը գնամ:

Ե Ղ Ա Ն Ա Կ.

§ 20. Բայը փոփոխում է եղանակներով.

ա. Բայի այն ձեւը, որը արտայայտում է ժամա-
նակ, դէմք եւ թիւ, կոչւում է տահմանական եղանակ.
(օր. Աշակերտը կարգում է: Մանուկը խաղաց:)

բ. Բայի այն ձեւը, որը չի արտայայտում ոչ ժա-
մանակ, ոչ դէմք եւ ոչ թիւ, կոչւում է անորոշ եղանակ:

Անորոշ եղանակը պատասխանում է. ինչ անի, ինչ
պէտք է անել հարցերին. (օր. գրել, կարգալ հաւատայ):

գ. Բայի այն ձեւը, որը արտայայտում է խնդր
կամ հրաման, կոչւում է հրամայական եղանակ. (օր.
գրիր, կարգա, տուր):

Վարժ. Հետեւալ նախադասութիւնների մէջ ցոյց տալ
տահմանական, անորոշ եւ հրամայական եղանակները:

Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ, առաջ տարէք արօրը:
Սուրէնը սկսեց կանչել: Պէտք է լսել մեծերին: Ես ոի-
րում եմ իմ ծնոգներին: Դու մի հաւատա վառերին: Երե-
ւոյն լալիս է: Պէտք է աշխատել, եւ ոչ ծուլանալ:

Խ Ո Ն Ա Ր Հ Մ Ա Ն Օ Ր Ի Ն Ա Կ.

Անորոշ եղանակ գրել:

Սահմանական եղանակ.

Ներկայ ժամ.	Անց. անի.	Կատարեալ	Ապառնի	Հրամ. եզ.
Ես գրում եմ	գրում էի	գրեցի	կը գրեմ	գրի՛ր,
դու գրում ես	գրում էիր	գրեցիր	կը գրես	գրեցէ՛ք.
նա գրում է	գրում էր	գրեց	կը գրէ	
մենք գրում ենք	գրում էինք	գրեցինք	կը գրենք	
դուք գրում էք	գրում էիք	գրեցիք	կը գրէք	
նրանք գրում են	գրում էին	գրեցին	կը գրեն	

ՀԵՐԱՅԻՐԱԹԵԱՆ ՓՈԲՐԻԿ ՕՐԻՆԱԿՆԵՐ.

1. *Դասատուն*. Ո՞րտեղ է տեղադրւած դասատունը: Դասատունը ինչ ունի: Պատերի մէջ ինչ է շինւած: Ինչո՞վ են սպիտակացրած պատերը: Ի՞նչ գոյնի են ներկած յատակն ու առաստաղը: Դասատան մէջ ինչ են շարւած: Նստարանների առաջ ինչ են գտնւում: Ի՞նչով են գրում գրատախտակի վրայ: Ի՞նչեր են կախւած պատերից: Ո՞վ է սովորեցնում: Ո՞վքեր են նստած նստարանների վրայ: Ի՞նչ են նրանք անում:

2. *Տուն*. Ի՞նչ է տունը: Ի՞նչից են շինում տները: Ո՞վքեր և ինչից են շինում փայտէ տները: Ի՞նչից և ո՞վքեր են շինում քարէ տները: Ի՞նչ ունի տունը վերևից: Ի՞նչ ունի տունը կողքից: Ի՞նչ ունի գետնում: Տների պատերի մէջ ինչ են շինում: Ի՞նչ կայ տանիքի վրայ:

3. *Այգի*. Այգիներում ինչպիսի պտղատու ծառեր և թփեր կան: Այգիներում կան ծաղիկներ և ինչպիսի: Ի՞նչ են շինում այգիներում ամառայ ծաղիկների համար: Ո՞վքեր են պաշտպանում այգիները միջատներից: Ի՞նչպէս պէտք է վերաբերել թռչուններին:

4. *Արտ*. Ո՞րտեղ են գտնւում արտերը: Ո՞վքեր են աշխատում արտերում: Ի՞նչ են անում գարնանը արտերում: Ի՞նչ հացահատիկներ են ցանում գարնանը: Ի՞նչ են անում ամառը արտերում: Ի՞նչ են անում արտերում աշնանը: Ի՞նչ հացահատիկներ են ցանում աշնանը: Ի՞նչպէս է կոչւում չր ցանած արտը:

5. *Կով*. Ի՞նչ է կովը: Ի՞նչպէս է նրա գլուխը: Ի՞նչ կայ նրա գլխի վրայ: Քանի ոտ ունի կովը: Ի՞նչ կայ իւրաքանչիւր ոտի ծայրին: Ինչո՞վ է ծածկւած կովի մարմինը: Ինչո՞վ են կերակրում կովերին: Ի՞նչ է տալիս կովը մարդուն: Ի՞նչ են պատրաստում կովի կաթից:

6. *Չի*. Ի՞նչ է ձին: Ի՞նչ տեսք ունի ձին: Ի՞նչպէս

է գլուխը, աչքերը, ականջները: Ի՞նչով է ծածկւած նրա վիզը: Ի՞նչպէս է կուրծքը, պոչը, ոտները: Ի՞նչ գոյնի են լինում ձիերը: Ի՞նչով են կերակրում ձիուն: Ի՞նչ օգուտներ է տալիս ձին:

7. *Սագ*. Ի՞նչպէս է սագի մեծութիւնը համեմատած միւս թռչունների հետ: Ի՞նչպէս է նրա կտուցը: Ի՞նչպէս է վիզը, մարմինը: Ի՞նչով է ծածկւած մարմինը: Ի՞նչպէս է ոտների շարժւածքը: Ի՞նչ կայ մատների արանքում: Ի՞նչով է կերակրւում սագը: Ի՞նչ օգուտ է տալիս:

8. *Մեղու*. Ի՞նչ է մեղուն: Քանի մասից է կազմւած նրա մարմինը: Ի՞նչ կայ նրա գլխին: Քանի թևեր ունի (չորս), ոտներ (վեց): Ի՞նչի է ծառայում խայթոցը: Ի՞նչ է անում մեղուն գարնանը և ամրանը: Ի՞նչ օգուտ է տալիս:

9. *Ծառ*. Ի՞նչ մասերից է կազմւած ծառը: Ո՞րտեղ են գտնւում արմատները և ինչի են ծառայում: Ինչո՞վ է ծածկւած բունը: Ո՞րտեղ են գտնւում տերևները և ինչ գոյն ունին: Ի՞նչպէս են անւանւում այն ծառերը, որոնք պտուղներ են տալիս, — որոնք անտառում են բուսնում: Ի՞նչ օգուտ են տալիս պտղատու և անտառի ծառերը:

10. *Դարձն*. Դարձան նշանները: — Եղանակը: Չիւնը ճանապարհներում և տանիքներում: Բնութեան վարժենիլը: Թռչունների վերադարձը: Դետերի վարարումը: Հօտերի դուրս գալը: Դիւղացոց աշխատանքները զաշտում, բանջարանոցում և այլու:

11. *Ամառ*. Ամրան գալը: Եղանակը: Բնութեան ծաղկիլը: Ամառայ բուսականութիւնները գիւղում: Հացաբոյսերի, բանջարեղէնների և պտուղների համեմակը:

12. *Աշուն*. Աշնան նշանները: Եղանակը: Ամպամած ու կարճ օրեր: Բնութեան կերպարանափոխիլը: Մառախուղները: Թռչունների չուն: Դպրոցների բացիլը:

Դիւղացու աշխատանքը դաշտում, այգիներում և բան-
ջարանոցում: Խոր աշուն: Չեան գալը:

12. Չմեռ. Չմրան սկիզբը: Եղանակը: Բնութեան
մեռելը: Չմրան ցերեկն ու գիշերը: Դիւղացոյ աշխա-
տանքը: Նոր տարին: Ծնունդը: Տօնածառը: Սահնակ-
ների վրայ սահիլը: Մեծ պատի առաջին շաբաթը:
Չմրան օգուտը հաղորդակցութեան համար:

14. Իմ դպրոց մտնելը. Հաւակը: Ծնողների որո-
շումը դպրոց տալու: Առաջին անգամ դպրոցում: Իմ
մտքերն ու տեքստերը դպրոցում: Նոր ընկերներ:

15. Իմ ուսումնական օրը. Առաւօտ: Հարթները:
Պատրաստութիւն ուսումնարան գնալու: Աշակերտի
մտքեր: Անհապաճճը. նշանաւոր շինութիւններ ցու-
ցանակներ... Առաւօտեան փողոցում: Սովորական հանդի-
պումներ: Դպրոցը. աղօթք դասեր և դասամիջոցներ:
Դասերի վերջանալը և տուն վերադառնալը: Օրւայ
վերջը*):

Վ Ե Ր Զ.



*) Այս վարժութիւնները թարգմանութիւն են Սատարովի
„Задачи, планы, темы...“ գրքից: Առհասարակ մեր այս ձեռ-
նարկը կազմելիս ի նկատի ենք ունեցել Վ. Ն. Սատարովի,
Տիխամիրովի գործնական տարրական քերականութիւնները և
այլոց նման աշխատութիւնները: Մ. Տ.

Մեր ԱԶԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. ՄԱՆԿԱԿԱՆ ՆՐԿԱՐԱՆ 20 Կ.
2. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ 5 Կ.
3. ԳՈՐԾԵԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (սպաս) 10 Կ.

Պատրաստուում է տպագրութեան «ԳՈՐԾԵԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (բարձր դասընթաց)».

ԴԻՆՆ Է 10 ԿՈՂ.

Դիմել՝ Александрополь, учителю М Тарахчіянь.

27

3198
2073

ՀՀ Ազգային գրադարան



NL0060876

